



9. ՓԱՐՇԵՎԱՆԳԸ ՈՒ ՆՐԱ ԱՐԱԾ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Կըլնի շըլնի մի թաքավոր. սա իրեք տղա է ունենում: Հոր մահից հետո, սրանց տեղակ մի ուրիշ մարդ է զոռով թաքավորում ու էսպեսով նրանց զրկում:

Թաքավորի տղերքը շահել ին ըլնում՝ շպսակված: Իրար հետ խոսում են, թե փողի պակասութուն շումենք, մեր հոր թախտը խլեցին՝ խլեցին. ի՛նչ անենք, եկեք մեր բախտը փորձենք ու պսակվենք:

Ամեն մեկը իրա հմար նետ ու անեղ ջինեկ տվեց, ու իրեքը միասին սկսեցին իրենց նետերը գցել, ասեցին՝ ում տան վրա ընկնի, նրա տանից պտի առնինք մեզ հմար աղջիկ:

Նրանք գցեցին. մեծ որդու նետը ընկավ մի դենբերալի տան վրա, միջնեկինը՝ մի հարուստ մարզի տան վրա, իսկ պատիկինը գնաց ծովի զրաղը ընկավ, երևի սրա բախտն էլ էս էր:

Ամեն մարդ իր բախտի բերածը իրան կնիկ առավ: Պատիկ եղբայրը գնաց ծովի ափը, էդտեղ քնեց: Գիշերը ծովից մի Գորտ եկավ ու մտավ նրա ծոցը:

Առավոտը տեսավ մի Գորտ իր ծոցում. գոհությամբ վեր կալավ այս Գորտը ու տարավ իրա տունը: Նա գնում էր որսի, իսկ

Չորսին թողնում տանը, բայց վերադառնալով տուն տեսնում էր տունը մաքրած է, ամեն բան չուր տեղը դրած. մնաց զարմացած: Այս բանը երբ մի քանի անգամ կրկնվեց, նա մտքում դրեց հետևել և իմանալ, թե ով է այս բոլոր բանը անողը:

Մի անգամ էլ որսի գնաց, իր դռանը կացավ. նա դռան մեջ մի ծակ էր արել ու այն տեղից սկսեց նայել: Տեսավ, որ իր բերած Գորտի միջից մի էնպիսի ղեղեցիկ աղջիկ դուրս էկավ, որ նրա բերանը մնաց բաց, ու սկսեց տունը սրբել: Նա իսկույն դուրս բաց արեց և նորան գրկեց: Նա վազեց ուղում էր կրկին մտնել իր Գորտի շապիկի մեջ, միայն թաքավորի տղեն չթողեց:

Աղջիկը ասեց.— Նս քունն իմ, դուն իմը, միայն շայրես այս շապիկը, թե չէ վատ բաներ կգա քո գլխին:

Նա չսեց նրան ու տարավ շապիկը գցեց վառած թունտիբը ու այրեց, վախենալով թե նա կարող է կրկին Գորտ դառնալ: Աղջիկը շատ տխրեց այս բանի վրա, բայց եղած բանին ի՛նչ կարող էր անել:

Մի անգամ թաքավորի տղեն ղնաց որսի, երեկոյան հետ դառնալիս ճանապարհի վրա տեսավ նստած մի կարճիկ մարդ, որի բոլոր հաղիվ մի թիղ լինելը, իսկ միտուքը մինչև երկինք: Նա խորհրդեց իրեն ընդունել տան մեջ իբրև ծառա. թաքավորի աղի սիրտը ցավեց նրա վրա ու ընդունեց նրան իր տան մեջ: Նրա կնիկը զգուշացրեց, բայց նա ուշադրութուն չդարձրեց նրա ասածի վրա:

Մի անգամ, երբ նա գնացել էր որսի, այս կարճ մարդը մի փետուր կրակին տվեց և մի հրեղեն ձի եկավ կանգնեց դռան առաջ: Նա այս աղջկանը դրեց ձիու վրա, ինքը նստեց ու տարավ:

Այս ձին այնպիսի ձի էր, որ վեց տարվա ճանապարհը մի քոպի մեջ էր գնում: Աղջկանը տարավ իր տունը, որ մի մեծ քարի տակ էր, այնպիսի քարի տակ, որ ինչքան հազար մարդ գային՝ չէին կարող վերցնել, բայց սա մի ձեռով դեն էր գցում:

Թաքավորի տղեն այդ օրը երբ դուրս եկավ որսի, ձին ինչ որ դժվարությամբ էր առաջ դնում, կարծես չէր ուղում գնալ, կարծես մի բան էր ուղում ասել: Այս բանը նկատեց նա ու ճանապարհի կեսից ձիու գլուխը հետ դարձրեց: Ձին կրակի նման թռավ ու հասավ տուն. ներս մտավ՝ ի՛նչ տեսնի՝ ոչ իր կնիկն է տանը, ոչ էն կարճիկը: էստեղ նա կծեց իր մատը ու միտքը բերեց իր կնկա

ասածը: Նա գնաց իր մեծ եղբոր մոտ սորա համար խորհուրդ հարցնելու, պատմեց բոլոր պատահածը, նա ասաց. «Ես ինձ համար չկարացի բան անել, դու ինչ կարող ես անել»:

Այս մեծ եղբայրը, պետք է ասած, բավականին քաջ էր, նա հետո ավելացրեց. «Ես քեզ տալիս եմ հարյուր մարզի ուժ, գնա հաղթի նրան»:

Հետո գնաց միջնակ եղբոր մոտ: Հարյուր մարզի ուժ էլ նա տվեց: Հետո լսեց թե մի ուրիշ մարդ էլ կա շատ քաջ. սորա մոտ էլ գնաց, հարյուր մարզի ուժ էլ սա տվեց. հայտնելով, որ Փարշևանգ մի իմաստուն մարդ կա. «Գնա՛ նրա մոտ, նա ամենից շատ կարող է օգնել»:

Սա գնաց նրա մոտ, պատմեց իր գլխով անցկացածը: Փարշևանգը ասեց, որ նրա հայրը իրան շատ լավություն է արել, այդ պատճառով էլ ինքը պարտավոր է նրան օգնել այս բանի մեջ և խոստացավ, որ ինչ կըզա ձեռիցը՝ շինայի:

Փարշևանգը նրան մի փետուր տվեց, ասելով որ կտանի այնինչ քարի տակը դնելուն պես, անգին քարը մի կողմ կընկնի: Այնտեղ է այն կարճիկ մարզի տները, ուր յուր կինն է:

— Քո կինը կդնես ձիուդ վրա ու կքշես. նա երեք տարուց հետո դուրս կգա իր տնից. կգա քո ետևից և ճանապարհի կեսին կըհասնի քեզ, կսպանի, բայց դու առաջուց խրատիր, որ քո մարմինը կտրտած լցնի խուրջինը, դնի ձիուդ վրա, մի պլետ տա ու թոցնի, նա դուզ ինձ մոտ կբերի, ես քեզ կսաղացնեմ:

Փարշևանգը ինչպես ասեց՝ նա գնաց արեց, իր կնիկը գրեց իր ձիուն ու քշեց: Այն կարճիկ մարդը իր տան մեջ մի իմաստուն մարդ ուներ: Երբ երեկոյան նա վերադարձավ, ասեց, որ ֆլան մարդը տարավ իր աղջիկը: Նա ժպտաց ասելով:

— Իմ ձեռից ևս նա ո՛ւր կարող է փախչել:

Անցավ իրեք տարի, նա նոր ձի նստեց ու մի ըոպի մեջ նրան հասավ, խլեց աղջիկը, ուզեց սպանել, նա խնդրեց, որ սպանելուց հետո իր մարմնի կտորները լցնի խուրջնի մեջ դնի ձիու վրա ու մի պլետ տա, թող ձին ուր ուզենում է գնա:

Նա խոստացավ կատարել նրա խնդիրը: Սպանեց նորան և մարմինը դրեց ձիու վրա: Խփեց ձիուն, ու ձին գնաց մարմինը տվեց Փարշևանգին, իսկ աղջիկը այն կարճ մարդը տարավ իր տունը: Փարշևանգը մտավ իր զերզանքին, շվացրեց՝ հազարավոր օձեր եկան. նա այդ մարմինը տվեց նրանց, որ կտորները իրար

գցեն՝ սաղացնեն։ Նրանք կատարեցին նրա հրամանը. կտորները հրար կուցրին, միայն թե քիչ տեղ պակասում էր. հետո մի անգամ էլ շվաքրեց՝ մի շատ մեծ օձ եկավ, նա ասաց սրան, որ իր պոչից կտրի ու սլակաս տեղերը կպցնի. նա կատարեց իր հրամանը։ Մարմինը պատրաստ էր, մնում էր շունչ տալ. նա կանչեց նորա մեծ եղբորը՝ նա եկավ ու մի անրամ փչելով շունչ ստացավ ու վեր կացավ, նստեց իր տեղը։

— Ինչ շատ հմ քնել,— ասեց նա։

Ի՛նչ հետո նրան պատմեցին բոլորը։ Փարշևանգը ասեց սորան.

— Այժմ մնում է մի ճար, որ կարողանաս քո կնիկը բերել նրա մոտից. այդ է, որ կարողանաս ձեռք բերել նորա ձիուցը։ Նրա ձիուցը միակ մի մարդ ունի. դու կերթաս նրա մոտ ու նոքար կըլնես նորա մոտ։ Քո նոքարուձյունը բոլորը երեք օր պիտի լինի. եթե այդ երեք օրվա մեջ դու նրա ասածները կարողացար կատարել՝ նա քեզ, ի՛նչ ուզես՝ կտա, և դու նրա ձիուց մի հատ կուզես, որ իրեք օրից հետո պիտի ծնվի։ Նա բնդամենը երեք ձի ունի։ Դու այդ երեք ձիին պիտի արածացնես, այլևս ոչինչ։ Երբ ձի կտա քեզ, դու իսկույն առաջ ինձ մոտ կգաս, ես քեզ կասեմ, թե ինչպես պետք է բերել։ Իսկ եթե լավ ծառայություն չանես, նա քո գլուխը կտրելու է։ Նա իննսուն ինը մարդի ղլուխ է կտրել, բունն էլ որ կտրի, հարյուրը կլրանա։

Քարավորի տղեն, ինչպես Փարշևանգը պատմեց, աչնպես էլ կատարեց։ Դնաց այդ մարդի մոտ, նոքար մտավ։ Նա ասաց ծառայության բոլոր պայմանները, համարյա այն բոլորը, որ նրան ասել էր Փարշևանգը։ Նրան տարավ ցույց տվեց այն բոլոր մարդոց գլուխները, որոնց վատ ծառայության համար նա կտրել էր։ Նա համաձայնեց այս բոլորին և մյուս օրվանից սկսեց իր ծառայությունը։ Նա հանձնեց սորան երեք հրեղեն ձիաներ, որոնց պետք է տաներ արածացնելու առավոտյան և երեկոյան ժամը հինգին հետ բերեր։ Նա տարավ այս ձիաները արածացնելու կանաչ դաշտերի վրա։ Ձիանիքը արածում էին, նրա քունը տարավ ու քնեց այս կանաչ խոտերի վրա։ Այս հանգամանքից օգուտ քաղելով, ձիաները թռան դնացին այնպիսի տեղ, որ ամբողջ տարիներ մարդ ման դար, չէր կարող դտնել։ Վեր կացավ տեսավ ձիաները չկան, դե՛ս նայեց, դե՛ն նայեց՝ չկան։ Չդիտեր, թե ի՛նչ անի. ժամանակը արդեն յրանում էր, որ ձիաները պիտի տուն դարձներ։ Նա վերջապես,

վճռեց ինքը իրան սպանել, քան թե գնա ու նա իր գլուխը կտրի։
Նա ձեռքը տարավ գրպանը որ հանի դանակը, հանկարծ մի փե-
տուր ընկավ ձեռը. նա շատ ուրախացավ. այս բոլորովին մտիցը
ընկել էր, այս փետուրը Փարշևանգն էր տվել, որ նեղ օրերին կրակ
տա՝ ինքը իսկույն կգա, կհասնի։ Նա իսկույն շախմախը տվեց-
կրակեց փետուրը ու իսկույն Փարշևանգը հասավ նրան։ Հարցրեց,
թե ինչ է ուզում և թե ինչ է պատահել։ Նա գնաց իր համար նետու-
աղեղ շինեց, իր ձին նստած նետը գցեց, նետը գնաց՝ ինքն էլ իր
ձիով այն նետի ուղղութեամբ թռավ, գնաց հասավ համարյա աշ-
խարհի ծայրը, ուր հասել էին այն ձիաները ու ծեծելով հետ քշեց
բերեց, տվեց նրան ու նա ուրախ-ուրախ տարավ տիրոջը հանձնեց։
Նա մնաց զարմացած ու տանելուն պես՝ համբուրեց նորա ճակատը
ասելով, որ մինչև այսօր այսքան մարգի գլուխ եմ կտրել, ոչ մինն
էլ չի կարողացել յուր ժամանակին հետ դարձնի։ Մյուս օրն էլ նա
տարավ արածացնելու։ Այս անգամ էլ քնով անցավ ու ձիաները
փախան ավելի հեռու. վեր կացավ տեսավ ձիաները չկան, այրեց
փետուրը ու Փարշևանգը եկավ ու նա գցեց իր նետը ու նրանց ուղ-
ղութեամբ գնաց, ձիաներին քշեց ու հետ բերեց։ Նա շտապով քշեց
տարավ տիրոջ մոտ։ Այս անգամ էլ զարմացավ նա ու կրկին համ-
բուրեց նորա ճակատը։ Մյուս օրն էլ նա տարավ արածացնելու
ձիաները, էլի քունը տարավ. ձիաները այս անգամ թռան, երկըն-
քին կպան, աստօռ մոտ հասան։ Էլի վերկացավ, տեսավ ձիաները
չկան. այն փետուրը կրակ տվեց ու Փարշևանգը եկավ գցեց իր
նետը դեպի երկինքը. գնաց այնտեղ ու քշեց ձիաներին, բերեց տվեց
նրան։ Նա յուր ժամանակին հանձնեց տիրոջը, նա այս անգամ էլ
համբուրեց նորա ճակատը։ Հարցրեց թե ինչքան փող է ուզում, նա
ասաց, թե նրան փող հարկավոր չէ, յուր նոր ծնվող ձիանոցից
մեկը իրան տա, բավական է։ Ասենք շատ դժվար էր սորա համար
այնպիսի մի ձի տալը, բայց ինչ կարող էր անել, քանի որ խոս-
տացել էր։

Նա ասաց.— Այն ձիուց մի հատ իմ եղբայրն ունի, մի հատ էլ
հիմա դու պիտի ստանաս, էլ ոչոք չունի։

Նա որ ասեց այս, էս մատը կծեց, իմացավ որ էն կարճիկ
մարդը ուրեմն սորա եղբայրն է, որ փախցրել է յուր կինը։ Արդեն
իրեք օր անցել էր և ժամանակն էր ձիուն ծնելու։ Մնելու ժամանակ,
նրանք երկուսով գնացին ձիու մոտ կանգնեցին։ Երբ քուռակը գլու-
խը հանեց, նա իսկույն սանձը բերանը դրեց, որովհետև հետո էջ

սրան անկարելի էր սանձել, երբ առաջի ոտները դուրս հանեց, իսկույն նալեց, ամեն ոտին երեսունվեց նալն էր խփում, առաջ տասներկու հատ ոսկի նալներ, հետո տասներկու հատ արծաթ, հետո սրա վրա տասներկու հատ պողպատե, և այս ձիու արժանիքը հենց իսկ այս նալների մեջ է. ապա թե ոչ հասարակ ձիանոց նման կլինեի: Երբ մարմնի կեսը դուրս եկավ՝ թամբը դրեց, երբ հետի ոտները դուրս եկան՝ դրանք էլ նալեց, միևնույն քանակությամբ նալ խփելով: Երբ ողջ մարմինը դուրս եկավ ու կանգնեց՝ նրա խելքը գնաց նորա գեղեցկության վրա: Նա հայտնեց յուր շնորհակալությունը նրան ու գնաց, նստեց նրա վրա ու քշեց ուղղակի Փարշեանգի մոտ: Նա ևս անշափ ուրախացավ:

Փարշեանգը ասաց.— Այժմ գնա, այլևս չվախենաս, այս փետուրը տար այն քարի տակը դիր, քարը կբարձրանա. վեր կալ կնոջդ ու քշիր ձիդ, նա կգա հետևներիցդ, բայց դու չվախես, նա քնդ ոչինչ չի կարող անել:

Նա գնաց, ինչպես Փարշեանգը ասել էր՝ արեց: Քարը բարձրացավ, վեր կալավ յուր կինը, դրեց ձիու վրա ու քշեց: Եկավ հասավ նույն տեղը, ուր առաջին անգամ նրան այդ կարճիկ մարդը սպանել էր, այստեղ նա կրկին հասավ ու պահանջեց աղջկան. թուրը քաշեց, ու նրան խփի, բայց թուրը չհանած կես եղավ ու չվայր ընկավ: Նա իսկույն գլխի ընկավ, որ այլևս նորան չի կարող սպանել, խնդրեց որ խնայի իրեն, չսպանի: Նա ներեց նորան: Այն կարճիկ մարդի և թաքավորի տղի ձիաները երբ իրար տեսան՝ ճանաչեցին, սկսեցին իրար հետ խոսել, սոքա հալալ եղբայր էին, մի մորից ծնած: Այն կարճիկի ձին հարցնում էր թաքավորի տղի ձիուն, թե ոնց է լայաղ անում, որ այնպիսի տգեղ արարածներին տանում է:

Նա ասաց.— Ընդհակառակը տգեղը քո մեջքինն է, մի՛ նայիր, իսկ ինձ վրա երկու ջահել սիրուն տղա և աղջիկ են նստած:

Կարճիկի ձին վեր նայեց ու տեսավ, թե ինչպիսի տգեղ արարած է նստած յուր վրա: Մեջքը շարժեց ձին ու նա թող գառավ, երկինքը բարձրացավ ու կրկին վայր ընկավ. իսկույն թաքավորի տղի կինը վայր եկավ մարդի թարթից ու նստեց նրա ձիու վրա ու գնացին երկուսը միասին: Ամենքից առաջ Փարշեանգին ներկայացան ու հայտնեցին իրանց շնորհակալությունը և հետո տեսան իրանց եղբայրներին ու այսուհետև առաջվա նման էլի սիրով ապրեցին երկար տարիներ: